Հովհաննես Ալեքսանյան (ՀՀ), պատմական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության և Սփյուռքագիտության ամբիոնների դասախոս

ՄՈՍԿՎԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1988-2000 ԹԹ.

Ռուսաստանի հայկական համայնքներում հասարակական-քաղաքական և ազգային կյանքը սկսել է վերականգնվել 1980-ական թթ. վերջին: Վերակառուցման քաղաքականության տարիներին խորհրդային իշխանությունները թույլատրեցին հանդես գալ հասարակական տարբեր նախաձեռնություններով՝ ձևավորելու հասարակական միավորումներ, մշակութային-լուսավորական և ազգային-հայրենակցական կազմակերպություններ[422]:

Հայկական ազգային կյանքի վերելքին, կազմակերպությունների ստեղծմանն ու ընդլայնմանը Ռուսաստանում լուրջ ազդակ հաղորդեց Լեռնային Ղարաբաղում ծավալված ազգային-ազատագրական շարժումը: Վերակառուցման քաղաքականությունը ազգային զարթոնքի և ինքնակազմակերպման կարևոր փուլ էր Ռուսաստանի, ինչպես նաև խորհրդային մյուս հանրապետությունների հայության համար, որը ծնունդ տվեց բազմաբնույթ ազգային կազմակերպությունների, որին հետևելու էր դրանց համախմբման դժվարին գործընթացը[423]:

Համամիութենական վերջին մարդահամարով ՌԽՖՍՀ հայությունը կազմում էր 532.390 մարդ[424], իսկ Մոսկվա քաղաքում հայության թվաքանակը կազմում էր շուրջ 44000 մարդ: Հատկանշական է, որ հետխորհրդային առաջին տասնամյակում Ռուսաստանի Դաշնության հայ ազգաբնակչության թվաքանակն անշեղորեն աճել է. 2002 թ. ՌԴ-ում անցկացված Համառուսաստանյան մարդահամարի պաշտոնական տվյալների համաձայն՝ հայության թվաքանակը նախորդ մարդահամարի արդյունքների համամատ ավելի քան կրկնապատկվել էր[425], իսկ Մոսկվա քաղաքում՝ գրեթե եռապատկվել (124.425 մարդ կամ

---

[422] Այդ կազմակերպությունների շարքում առաջինն ուկրաինական «Սլավուտիչ»-ն էր, որին հետևեցին մյուս ազգային միավորումները:

[423] Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: очерки социокультурной типологии, Е., 2009, с. 105.

[424] Национальный состав населения РСФСР по данным Всесоюзной переписи населения 1989 г., М., 1990, с. 5.

[425] Итоги Всероссийской переписи населения 2002 года, (В 14 томах), том 4, книга 1, Национальный состав и владение языками, гражданство, М., «Статистика России», 2004, стр. 8, 20.

քաղաքի բնակչության ավելի քան 1%-ը[426]) : Պաշտոնական տվյալներից տարբերվող թվային ցուցանիշերի համաձայն՝ ՌԴ և Մոսկվա քաղաքի հայ բնակչության թվաքանակն առնվազն երկու անգամ ավելին է: Մոսկվան հարյուրամյակներ շարունակ եղել է ռուսահայերի բնակության ոչ միայն ուղղակի խոշոր կենտրոնը, այլ նաև այստեղ էր կենտրոնացած համայնքի հասարակական, քաղաքական, տնտեսական, մշակութային ու գիտական ներուժի հիմնական մասը[427], ուստիև բոլորովին էլ պատահական չէ, որ այստեղ ծնունդ առան հայկական առաջին կազմակերպությունները: Հետխորհրդային առաջին տարիներին նույնպես ՌԴ տարածքում հիմնված ու գործող հայկական ազգային հասարակական կազմակերպությունների բարդ համակարգում հատկապես կարևոր դեր ստանձնեցին Մոսկվայի հայ համայնքը և այստեղ ձևավորված հայկական կառույցները:

Մոսկվայում և ՌԴ տարբեր սուբյեկտներում սկզբնական շրջանում հայերին միավորող կառույցներն առավելապես կրում էին ադապտացիոն կենտրոնների բնույթ, ինչի հետևանքով էթնոմշակութային ու ազգային-քաղաքական խնդիրները հետին պլան էին մղվում[428]: Հայության քաղաքական խնդիրների հստակ ձևակերպմամբ այս շրջանում հանդես էր գալիս Հայ-ռուսական համագործակցությունը, որը հիմնվել է 1990 թ. :

Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ Ռուսաստանի հայկական համայնքների կայացումը տեղի էր ունենում ազգային ինքնության ու գաղափարախոսության մշակման, փնտրտուքի պայմաններում: Ուստիև սկզբնական փուլում ոչ բոլոր դեպքերում է կարելի նշել իրապես գործող և համապատասխան գործիքակազմ ունեցող կառույցների մասին, որոնք արտահայտում էին հայության այս կամ այն խմբի շահերը: Այս առումով հատկանշական է, որ հայ միգրանտների հիմնական մասի համար համայնքային կյանքը շարունակվում էր ասոցացվել դեռևս խորհրդային տարիներից եկող «հասարակական աշխատանքի» հետ[429]:

---

[426] Осадчая Г. И., Мигранты из Армении и Грузии в Москве, М., 2010, с. 17-18.

[427] Степанянц С. М., Известные армяне Москвы в XVIII- XX вв., Армяне в истории и культуре России XVIII- XX вв.: Материалы международной научной конференции (Москва-Пушкино, 26-28 октября 2016 г.), отв. ред. П. М. Петров, Т. И. Любина, Ростов н/Д, 2016, с. 360-364.

[428] Ազիզբեկյան Ռ., «Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակակական կազմակերպության ձևավորումն ու գործունեությունը 2000-2005 թթ., Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, 2015, (2), էջ 186:

[429] Мелконян Э., Другая диаспора? К характеристике армянских общин на постсоветском пространстве, Материалы научно-практической конференции “Армянские общины на современном этапе: выживание, перспективы”, 19-20 июня,

ՌԴ հայ համայնքը սոցիալական և էթնոմշակութային առումներով միաշերտ չէ, որը հատկապես ակնառու էր հնաբնակների և 1980-ական թթ. վերջին-1990-ական թթ. այստեղ բնակություն հաստատած նորեկների միջև: Վերջիններս չէին անցել սոցիալ-տնտեսական և իրավական ադապտացիան, բախվում էին աշխատանքի ապահովման, բնակության, կարգավիճակի և այլ խնդիրների, ուստիև նոր ձևավորված համայնքային միավորումները և կառույցները կրեցին ադապտացիոն կենտրոնների բնույթ, սկսեցին առաջ մղել սոցիալ-տնտեսական շահեր[430]: Պատահական չէ, որ համայնքային կառույցների մի մասը, ինչպես Մոսկվայում, այնպես էլ ողջ ՌԴ-ում, հիմնեցին բիզնեսի հայ ներկայացուցիչները, որոնք այդ կերպ կարողացան հանրային լայն ճանաչում և որոշակի կարգավիճակ ստանալ: Այս գործընթացն ինչ-որ չափով անխուսափելի էր, քանի որ համայնքային, հասարակական-մշակութային կառույցների ձևավորման ու զարգացման համար անհրաժեշտ էր ներդնել ֆինանսական մեծ միջոցներ: Մոսկվայի և ՌԴ հայկական համայնքների կարգավիճակի հստակեցմանը, կառույցների լիարժեք ձևավորմանը ու ինստիտուցիոնալ առումով կայացմանը զգալիորեն նպաստել է ՌԴ-ում ՀՀ դեսպանության հիմնումը:

1988 թ. սկզբին Մոսկվայի Սբ. Հարության եկեղեցու բակում տեղի են ունեցել բազմամարդ հանրահավաքներ՝ ի պաշտպանություն Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի, որոնց արդյունքում 1988 թ. մարտի 13-ին ծնունդ է առել առաջին հայկական կազմակերպությունը՝ «Ղարաբաղ» կոմիտեն: Կոմիտեի ձևավորման ակտիվ անդամներից էին Կորյուն Նահապետյանը, Մանուկ Շամիրովը, Ռուբեն Գևորգյանը և այլք:

Հետագա ամիսներին ձևավորվել են «Բարև ձեզ» (1988 թ. ապրիլի 12, նախագահ՝ Ս. Բարաթով)[431], «Հյուսիսափայլ» (1988 թ. օգոստոսի 29, նախագահ՝ Կ. Մեժլումյան) և «Մաշտոց» (1988 թ. նոյեմբերի 20, նախագահ՝ Ա. Պողոսյան) մշակութային միությունները, «Վասպուրական» երիտասարդական միավորումը (1988 թ. դեկտեմբերի 14, նախագահ՝ Ա. Տերյան) և այլն[432]:

Այդ կազմակերպությունների համախմբման և զանազան կոորդինացիոն խորհուրդների ձևավորման գործընթացն ավարտին է հասել 1989 թ. հունիսի 20-29-ին ձևավորված Մոսկվայի քաղաքային հայկա-

---

2007 г., Ереван, Бюллетень научно-образовательного фонда “Нораванк”, Е., 2007, с. 13.

[430] Григорьня Э. Р., Армянство России: используемые ресурсы, Армяне в России, Сб. статей, под ред. Э. Р. Григорьяна, М., 2013, с. 34-35.

[431] ЦАОПИМ (Центральный архив общественно-политической истории Москвы), ф. 4, оп. 218, д. 157, лл. 8-26.

[432] Ալեքսանյան Հ., Հայկական համայնքները խորհրդային հանրապետություններում 1941-1991 թթ., Ե., 2016, էջ 38:

կան մշակութային կազմակերպության հիմնումով: Վերջինս, հավակնելով իրականացնել համայնքային կառույցի գործառույթներ, գոյատեվեց մեկ տարի՝ մինչև 1990 թ. հունիսի 13-ը, որից հետո տրոհվեց: Կազմակերպության Խորհրդի նախագահն էր Արամ Սիմոնյանը, Վարչության նախագահը՝ Վահան Էմինը: Պառակտումից հետո կազմակերպության Խորհուրդն ու Վարչությունն առանձին-առանձին հրատարակում էին «Արմյանսկի վեստնիկ»-ի իրար մրցակից երկու տարբերակները:

Ռուսաստանում հայերի համայնքային կազմակերպություն ունենալու ձգտումը դարձել էր օրակարգային, ուստիև 1991 թ. նոյեմբերի 30-ին Մոսկվայի Պառլամենտական կենտրոնում տեղի է ունեցել «Մոսկվայի հայ համայնք» (Московская армянская община) կազմակերպության հիմնադիր ժողովը: Կազմակերպության Խորհուրդը գլխավորել է Ռուբեն Մելքոնյանը, իսկ Վարչությունը՝ Գեղամ Խալաթյանը: 1992 թ. հունիսի 25-ին նորաստեղծ համայնքային այս կազմակերպությունը նույնպես տրոհվել է: Նրանից հեռացած անդամները հիմնել են նոր կառույց՝ «Մոսկվայի հայ համայնք» (Армянская община Москвы) անունով, որը գրանցվել է 1993 թ. փետրվարի 16-ին (Խորհրդի նախագահ՝ Ս. Գրիգորյան, Վարչության նախագահ՝ Գ. Խալաթյան):

1993 թ. հունիսի 20-ին Մոսկվայում հիմնադրվել է նաև Մոսկվայի հայկական ասամբլեան, իսկ վերջինիս հիմքի վրա 1993 թ. հուլիսի 22-ին՝ Միջազգային հայկական ասամբլեա կազմակերպությունները, որոնց նախագահն էր Սերժ Ձիլավյանը:

1994 թ. ապրիլին Մոսկվայում սկսում է լույս տեսնել երկլեզու «Հյուսիսափայլ» հանդեսը: Նույն թվականի նոյեմբերին հիմնադրվել է «Ռուս-հայկական նախաձեռնությունների կենտրոն» միջազգային միավորումը, իսկ դեկտեմբերին՝ «Հայկական համաշխարհային համագումար»-ը:

ՌԴ-ում հայկական ազգային կառույցների ձևավորման նոր փուլի սկիզբն էր 1996 թ. հունիսի 17-ին «Ազգային-մշակութային ինքնավարություն ների մասին» ՌԴ օրենքի ընդունումը[433]: ՌԴ օրենքը բաղկացած էր 21 հոդվածներից, որոնցում հստակեցված էին ազգային-մշակութային ինքնավարություն հասկացությունը, սկզբունքները, իրավական կարգավորումները և այլն: Սահմանվում էին ազգային-մշակութային ինքնավարությունների հասարակական և կամավոր ձևավորման բնույթը, ազգային փոքրամասնության ինքնության պահպանման, մշակույթի, լեզվի զարգացման, կրթական ու գիտական առաջընթացի, հրատարակչական հնարավորությունները: Այս օրենքի ընդունումից

[433] Закон РФ “О национально-культурной автономии” http://kremlin.ru/acts/bank/9578

անմիջապես հետո Մոսկվայում և ՌԴ մարզերում գրանցվել են բազմաթիվ հայկական կազմակերպություններ[434]:

Մոսկվա քաղաքի վարչական տարածքի՝ Հարավ-Արևմտյան օկրուգի հայկական ինքնավարության (նախագահ՝ Ս. Գրիգորյան) հիմքի վրա 1997 թ. սեպտեմբերի 3-ին գրանցվել է համաքաղաքային ազգային ինքնավարությունը: Մոսկվայի մյուս 9 օկրուգներում ևս սկիզբ է առել ինքնավարությունների ձևավորման դժվարին գործընթացը, բայց քանի որ արդեն առկա էր համաքաղաքային կառույցը, նորերի գրանցումը և համաքաղաքային ինքնավարության հարցերը, որպես մեկ լիարժեք միավորի օրինականություն (լեգիտիմություն), ցավագին էին ընդունվում համայնքի ներսում:

1998 թ. փետրվարի 15-ին Մոսկվա քաղաքի 9 օկրուգային հայկական ազգային-մշակութային ինքնավարությունները հիմնադիր կոնֆերանս հրավիրեցին «Արբատ» հյուրանոցում համաքաղաքային լեգիտիմ կառույց ձևավորելու համար (Խորհրդի նախագահ է ընտրվել Վ. Արծրունին), սակայն այն գրանցել չհաջողվեց[435]:

Այսպիսով՝ 1990-ական թթ. Մոսկվայում հիմնված տարատեսակ հայկական մշակութային, ազգային-համայնքային կազմակերպությունների միավորման գործընթացը ձախողվեց, դրանք գործում էին հիմնականում առանձին-առանձին, ակնհայտ էր մրցակցությունը: Շուրջ 10 տարի տևած միավորման փորձերն արդյունք չտվեցին, միասնական կազմակերպություն չհաջողվեց ձևավորել. պահանջվում էին նոր մոտեցումներ, ժամանակ ու կամք:

1999 թ. հիմնադրվել է հայկական մշակութային-լուսավորական «Արարատ» միությունը, որը տարածաշրջանային հասարակական կազմակերպություն է: «Արարատ»-ի հիմնադիր նախագահն է էմմանուիլ Դոլբակյանը, որի գլխավորությամբ կառույցը լայնամասշտաբ ձեռնարկներ է իրականացրել հայկական մշակույթն ու պատմությունը քարոզելու, տարածելու առումով: Այս շարքում առանձնահատուկ կարևորություն են ստացել Ռուսաստանի հայերի պատմության ուսումնասիրմանն ուղղված Համառուսաստանյան “Лазаревские чтения” գիտական միջոցառումները[436]:

1999 թ. սեպտեմբերի 4-ին ծնունդ է առել նոր ռեգիոնալ հասարակական համայնքային կազմակերպություն՝ «Միացում»-ը, որի նախագահն էր Ն. Մուրադյանը: 2000 թ. մայիսի 25-ին Մոսկվայի «Պրեզիդենտ հոթելում» անցկացված հիմնադիր համագումարում այդ կազմա-

---

[434] «Հայ Սփյուռք» հանրագիտարան, Ե., 2003, էջ 489:

[435] Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., Ռուսաստանի հայ գաղթօջախների պատմություն, Ե., 2015, էջ 360-361:

[436] «Российские армяне». этносоциологическое исследование, отв. ред. Ю. В. Арутюнян, 2016, с. 183-184.

կերպությունը (գրանցվել էր մինչ համագումարի հրավիրումը) վերակազմավորվեց նոր համայնքային կառույցի, սակայն հին անվանումով՝ «Մոսկվայի հայկական համայնք» (Խորհրդի նախագահ՝ Ն. Թևանյան, Վարչության նախագահ՝ գ-լ Ռ. Հարությունով):

Մոսկվայում և Ռուսաստանի Դաշնության տարբեր սուբյեկտներում գործող հայկական կազմակերպությունները միավորելու, Համառուսաստանյան հայկական ազգային-համայնքային կազմակերություն ձևավորելու քայլերը հաջողությամբ պսակվեցին նոր դարագլխին:

Մինչ այդ 1999 թ. սեպտեմբերին Երևանում գումարված Հայաստան-Սփյուռք առաջին խորհրդաժողովը աշխարհասփյուռ հայկական համայնքներին հայրենի հարկի տակ հանդիպման կարևոր խթան եղավ, կազմակերպական զորեղ ազդակ դարձավ այդ աշխատանքներին մասնակցող հետխորհրդային հանրապետությունների հայկական նորաստեղծ ազգային-համայնքային կառույցների միավորման և ամրապնդման համար:

Համառուսաստանյան հայկական ազգային-համայնքային կազմակերպության ձևավորման գործում առանձնակի նախաձեռնություն հանդես բերեց անվանի հայ գործարար Արա Աբրահամյանը: Նրա գլխավորությամբ կազմվեց Նախաձեռնող խումբ, որը ձեռնամուխ եղավ հիմնելու «Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպությունը: Նախաձեռնող խմբի առաջին քայլերից էր Մոսկվայի ու մարզերի հայազգի մտավորականության հետ կապերի հաստատումը և նրանց այդ գործընթացի մեջ ներգրավելը[437]: Կազմակերպական կոմիտե ձևավորելու առաջարկին արձագանքեցին հարյուրավոր մարդիկ՝ լծվելով Ռուսաստանի հայկական համայնքների Համառուսաստանյան համագումար հրավիրելու գործին:

2000 թ. հունվարին մերձմոսկովյան ժուկովկա հանգստյան տանը տեղի է ունեցել Նախաձեռնող խմբի առաջին հավաքը, որը հաստատել է հայկական հասարակական կազմակերպություն հիմնելու նախագիծը և Ռուսաստանի տարբեր հայկական կառույցներին հրավիրել է իրենց պատվիրակներին գործուղել Կազմկոմիտե:

1990-ական թթ. ռուսահայ կազմակերպությունների միավորման անպտուղ փորձերը հաշվի առնելով՝ որոշում կայացվեց հրաժարվել այդ կառույցները միավորելու ուղղահայաց սկզբունքից, այն է՝ հայերի Համառուսաստանյան կազմակերպություն հիմնելուց հետո միայն ռե-

---

[437] Տե՛ս «Россия-Армения: регионы России и марзы Армении (география, история, недра, население, религия, власть, экономика, социальная сфера, достопримечательности, стратегия развития)», энциклопедия. Под научной редакцией профессора М. А. Севрука, армянская часть-под редакцией В. М. Сафаряна, издание шестое, измененное и дополненное, Ереван, 2010, с. 832.

գիոնալ կառույցները նրա ներքո միավորելու մոտեցումից: Որոշվեց մտավորական ուժերի համախմբում իրականացնել կենտրոնում և համայնքներին լիարժեք ինքնուրույնություն տրամադրել տեղերում, որոնց շնորհիվ հակասությունների և բախման շրջանակը զգալիորեն մեղմվում էր[438]:

2000 թ. փետրվարի 12-ին կայացել է Կազմկոմիտեի առաջին նիստը, որը գլխավորել է Արա Աբրահամյանը: Ռուսաստանի հայերի համայնքային կազմակերպության ձևավորման գործում մեծ ներդրում են ունեցել Ա. Չիլինգարովը, Ա. Միհրանյանը, Գ. Աղայանը, Գ. Գաբրիելյանցը, Ս. Գրիգորյանը, Վ. Արծրունին, Շ. Կարապետյանը, Ն. Տեր-Գրիգորյանցը, Գ. Խալաթյանը, Գ. Տեր-Ղազարյանցը, Ս. Գևորգյանը,Կ. Ուդումյանը և այլք:

2000 թ. մարտի 10-ին մերձմոսկովյան «Պետրովո-դալնեյե» հանգըստյան տանը տեղի է ունեցել Ռուսաստանի 45 սուբյեկտների հայկական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների կոնֆերանս, որը հավանություն է տվել կազմակերպության Կանոնադրության նախագծին, «Ռուսաստանի հայերի միություն»-ը Համառուսաստանյան հայկական հասարակական այդ կազմակերպությանն անվանում է առաջարկել հաստատել և նշանակել է հիմնադիր համագումարի օրը:

«Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպության հիմնադիր համագումարը հրավիրվել է 2000 թ. հունիսի 16-ին Մոսկվայի «Պրեզիդենտ հոթել»-ում, որին մասնակցել են հայկական համայնքների 183 պատվիրակներ ՌԴ 44 սուբյեկտներից: «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպության նախագահ է ընտրվել Ա. Աբրահամյանը: Համագումարն ընտրել է նաև Խորհուրդ, Վարչություն և Վերահսկիչ հանձնաժողով, որոնց կազմի մեջ են մտել գիտության, արվեստի և մտավորական անվանի գործիչներ, Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչներ, գործարարներ ՌԴ տարբեր մարզերից[439]:

«Ռուսաստանի հայերի միություն» Համառուսաստանյան հասարակական կազմակերպության հիմնադրման գործում մեծ էր նաև Հայ Առաքելական եկեղեցու Նոր Նախիջևանի ու Ռուսաստանի թեմի առաջնորդ եպիսկոպոս Եզրասի և Հարավային Ռուսաստանի հովվության առաջնորդ եպիսկոպոս Մովսեսի դերակատարությունը: «Ռուսաստանի հայերի միության» հիմնադիր համագումարին մասնակցել է ՌԴ աշխարհիկ և հոգևոր իշխանության բարձրագույն ղեկավարությունը: ՌԴ նախագահ Վ. Պուտինը մասնավորապես ընդգծել է ՌԴ քաղաքացի հայերի հավասարակշիռ ու իմաստուն դիրքորոշումը

---

[438] Ազիզբեկյան Ռ., նշվ. աշխ., էջ 188:
[439] http://www.sarinfo.org/way/syezd1.shtml

հասարակական զարգացման հարցերում, որի շնորհիվ ամրապնդվում է ՌԴ-ՀՀ ռազմավարական գործընկերությունը՝ հույս հայտնելով, որ հիմնադիր համագումարը նպաստելու է քաղաքացիական համաձայնությանն ու խաղաղությանը երկրում[440]:

Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդն իր խոսքում համոզմունք է հայտնել, որ Համառուսաստանյան հայկական հասարակական կազմակերպությունը նպաստելու է հայ և ռուս ժողովուրդների ավանդական բարեկամությանը, խաղաղության և համաձայնության ամրապնդմանը բազմազգ ու բազմակրոն ՌԴ-ում:

Հիմնադրումից անմիջապես հետո «Ռուսաստանի հայերի միություն»-ը լայնամասշտաբ աշխատանքներ է ծավալել ազգային ինքնության, մշակույթի ու լեզվի պահպանման, ինքնակազմակերպման և այլ ուղղություններով: Այդ նպատակով մեծ ուշադրություն է հատկացվել հետևյալ խնդիրներին ու նպատակներին.

- ազգային հանրակրթական և կիրակնօրյա դպրոցների կազմակերպմանն ու ազգային համույթներին աջակցությանը,
- ռեգիոնների հայկական համայնքների կառուցվածքի ուսումնասիրմանը, նրանց ներգրավվածությանը ձեռնարկատիրական գործունեության մեջ, աշխատանքի այլ ոլորտներում: Նպատակային ծրագրերի իրականացմանն աշխատատեղեր հիմնելու նպատակով, առանձին դեպքերում հայերի վերաբնակեցման ծրագրերի իրականացմանն այնպիսի ռեգիոններում, որտեղ առկա են ադապտացիայի և կեցության համար բարենպաստ պայմաններ:
- գործունեության նոր տեսակների յուրացմանը՝ հայկական համայնքների մոբիլիզացմանը դաշնային և տեղական իշխանության մարմինների ընտրություններում: Ապահովելու հայկական համայնքի քաղաքական լուսավորում՝ ավելի գիտակցված և հիմնավորված ընտրություն կատարելու թեկնածուների կամ նախընտրական բլոկների միջև:
- հատուկ ուշադրության բևեռում այլ ազգային կազմակերպությունների հետ կապերի հաստատմանն ու խորացմանը՝ միջէթնիկ համերաշխության և արդյունավետ ինտեգրման համար ռուսական մշակութային տարածքում:

Հիմնադիր համագումարից անմիջապես հետո ձևավորվեցին ՌՀՄ կառուցվածքային ստորաբաժանումները, իսկ ՌՀՄ ղեկավար կազմում (որպես փոխնախագահ) տեղ գտան ՌԴ առավել խոշոր հայկական համայնքների՝ Մոսկվայի, Սանկտ-Պետերբուրգի, Կրասնոդա-

---

[440] «Россия-Армения: регионы России и марзы Армении (география, история, недра, население, религия, власть, экономика, социальная сфера, достопримечательности, стратегия развития)», энциклопедия, նշվ. աշխ., էջ 832:

րի, Դոնի Ռոստովի, Ստավրոպոլի և Նովոսիբիրսկի կառույցների ղեկավարները:

ՌՀՄ կառուցվածքում առանձնացվել են գործունեության տարբեր ոլորտները կարգավորող մարմիններ՝ ինֆորմացիոն-վերլուծական (իրականացնելու էր մոնիտորինգ հայկական համայնքների շրջանում, աշխատելու էր ՁԼՄ-ների հետ, փոխանակելու էր տեղեկատվություն), ֆինանսա-տնտեսական (կազմակերպելու էր ֆինանսատնտեսական գործունեությունը, հայկական բիզնեսի հեռանկարների զարգացումը, բիզնես-ծրագրերի կազմումը՝ ՌՀՄ ֆինանսական ինքնաապահովման և ստացված եկամուտների զգալի մասը ՌՀՄ ծրագրերի իրականացմանն ուղղելու նպատակով[441]), սոցիալ-իրավական (իրականացնելու էր իրավական աջակցություն, քաղաքացիական իրավունքների և ազատությունների պաշտպանություն, ինչպես նաև սոցիալական աջակցության տրամադրում կարիքավոր հայրենակիցներին, աշխատատեղերի ստեղծում), պետական մարմինների հետ փոխգործակցության (իրականացնելու էր դաշնային, ռեգիոնալ և տեղական գործադիր ու օրենսդիր մարմինների հետ կապերի հաստատում ու զարգացում), հումանիտար (զբաղվելու էր մշակույթի, կրթության, լեզվի զարգացման հարցերով, ՌԴ հասարակական-քաղաքական միավորումների, ազգային-մշակութային ինքնավարությունների, կրոնական կազմակերպությունների, ինչպես նաև արտասահմանի հայկական Սփյուռքի և նրա ներկայացուցչական ինստիտուտների հետ կապերի հաստատումով)[442]:

Այսպիսով՝ Մոսկվայի տարաբնույթ հայկական հասարակական-համայնքային կառույցները զգալի դերակատարություն ունեցան ՌԴ հայ համայնքի ակտիվացման ու ուղղորդման գործում, նոր լիցք հաղորդեցին հայության հասարակական-մշակութային կյանքին՝ մասնակցելով Համառուսաստանյան «Ռուսաստանի հայերի միություն» կազմակերպության ձևավորման գործին:

ՌԴ մայրաքաղաք Մոսկվայում գործող հայկական կազմակերպությունները միավորելու կամ համառուսաստանյան կառույց ձևավորելու ճանապարհին, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր Ա. Սվարանցի դիտարկմամբ ձեռնարկվել է երեք փորձ. «1990-2000-ական թթ. Ռուսաստանի հայերը մի քանի նախաձեռնություն հանդես բերեցին սփյուռքի (ՌԴ հայ համայնքի - Հ. Ա.) ավելի արդյունավետ

---

[441]Հատկանշական է, որ որոշ փորձագետների ու վերլուծաբանների հաշվարկներով ՌԴ կապիտալի ու բիզնեսի շուկայում նկատելի է հայկական սեգմենտը, իսկ ՌԴ ՀՆԱ-ի շուրջ 1.5-2%-ը «հայկական է»: Տե՛ս Армянская диаспора в контексте российско-армянских экономических связей (колл. монография), отв ред. Э. Р. Григорьян, Р. С. Карапетян, М., 2013, с. 140.

[442] Բարխուդարյան Վ., Ալեքսանյան Հ., նշվ. աշխ., էջ 364-365:

ինքնակազմակերպման առումով՝ համապատասխան համայնքի օբ-յեկտիվ շահերի և երկրի նոր օրենսդրության… Կենտրոնում, Դաշ-նության մակարդակով երեք անգամ փորձ կատարվեց նախաձեռնելու Համառուսաստանյան հայկական հասարակական կազմակերպութ-յուն»[443]: Նկատի էր առնվում Սերժ Ձիլավյանի («Մոսկվայի հայկական ասամբլեան» և «Միջազգային հայկական ասամբլեան» 1993-1994 թթ.), Արկադի Վարդանյանի («Հայ-ռուսական նախաձեռնությունների կենտրոն» Համառուսաստանյան կառույցը 1996-1997 թթ.) և այդ հար-ցում հաջողություն արձանագրած Արա Աբրահամյանի («Ռուսաստանի հայերի միությունը» և «Համաշխարհային հայկական կոնգրեսը» 2000-2003 թթ.) նախաձեռնությունները:

Այդուհանդերձ, տարբեր տարիներին Մոսկվայի հայերի շրջա-նում անցկացված էթնոսոցիոլոգիական հետազոտությունները ցույց են տալիս, որ քաղաքի հնաբնակ ու նորեկ հայերի միջև առկա են էթնիկ ինքնանույնականացման խնդիրներ, որոնք դրսևորվում են սոցիա-լական կյանքի տարբեր ոլորտներում, առօրյա վարքագծում և էթնիկ տրանսֆորմացիայի հեռանկարում. «Հայկական համայնքները, որոնք միավորել են Մոսկվայի հայերին, թվում է, թե անկարող են հաղ-թահարել ներկայիս դրությունը. Մոսկվայի հնաբնակ ու այնտեղ ծնված հայերի ու նորեկների միայն 13-15%-ն է կապ պահպանում համայնք-ների ու համապատասխան կազմակերպությունների հետ»[444]:

XXI դարի սկզբին ինչպես Մոսկվայում, այնպես էլ ամբողջ ՌԴ տարածքում կյանքի կոչվեցին տասնյակ հայկական նոր կազմակեր-պություններ, որոնք իրենց շուրջն են համախմբել հազարավոր հայրե-նակիցների:

Մոսկվայի հայ համայնքի հետագա զարգացումը, հզորացումը, կազմակերպական նոր որակները կարող են դառնալ ազգային ինք-նության պահպանման կարևոր նախապայման ինչպես քաղաքի, այն-պես էլ ՌԴ հայության համար:

---

[443] Александр Сваранц, Опыт самоорганизации армян России на рубеже веков. Юсисапайл (02.02.2013).
Александр Сваранц, Армянство России на рубеже веков. Ноев Ковчег, № 6 (141), Июнь 2009 года. http://noev-kovcheg.ru/mag/2009-06/1656.html.

[444] Հարությունյան Յ. , Մոսկվաբնակ հայեր. էթնոսոցիոլոգիական հետազոտության որոշ արդյունքներ, Հայերը սեփական և այլազգի միջավայրում. Համեմատական էթնոսոցիլոգիական հետազոտություններ, Ե. , Գիտություն հրատ., 2014, էջ 116:

Ованнес Алексанян (РА), *Армянские общественные и культурные организации Москвы в 1988-2000 гг.*

Hovhannes Aleksanyan (RA), *Armenian social and cultural organizations of Moscow in 1988-2000*. The social, national and cultural life of the Armenian communities of Russia began to be restored in the 1980s during the Reconstruction Policy of the USSR. For centuries a considerable part of the social, political, economic, cultural and scientific potential of the Russian-Armenian community was concentrated in Moscow, and it is no coincidence that the first Armenian organizations were created here.

The "Karabakh" Committee, "Barev dzez", "Hyusisapayl" and "Mashtots" Cultural Unions, "Vaspurakan" Youth Union, and later the Moscow City Armenian Cultural Organization were founded in 1988 in Moscow. These and other organizations were split after the establishment. Launching of the new stage of formation of Armenian national structures in the Russian Federation started with the adoption of the "Law on National-Cultural Autonomy of Russia" on June 17, 1996. Dozens of Armenian new structures have been established, including the Armenian cultural-enlightening "Ararat" Union. However, the largest and the most influential organization, the Union of Armenians of Russia, was founded in 2000 in Moscow, where 183 delegates from Russian Armenian communities were present, representing 44 Russian regions.